



2020.06.25
Արձանագրություն թիվ 15

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ



**«Մենեջմենտ» և «Մարկետինգ» մագիստրոսի կրթական
ծրագրերի միջազգային բենչմարքինգ**

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

«Մենեջմենտ» և «Մարկետինգ» մագիստրոսի կրթական ծրագրերի միջազգային բենչմարքինգ



Նպատակը՝

Կրթական ծրագրի վերանայման, մշտադիտարկման, բարելավման և ուսումնական գործընթացների կառավարում՝ միջազգային առաջատար բուհերի փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) միջոցով:

Ելնելով բենչմարքի նպատակներից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ-ն անցումային տնտեսությամբ երկիր է, որտեղ սպորտի ինդուստրիայի զարգացումը կարող է դառնալ փոփոխությունների կատալիզատոր ու նպաստել երկրի տնտեսական աճի առաջխաղացմանը, իրականացվել է արտասահմանյան բուհերի կրթական ծրագրերի ուսումնասիրություն և դուրս բերվել լավագույն փորձի ներդրման հնարավորությունները:

Բենչմարքի համար ընտրված են միջազգային բուհեր, որոնք ունեն ազգային և/կամ միջազգային ծրագրային հավատարմագրում: Հենանիշ (էտալոնային) բուհերից երկուսը սպորտի ոլորտի կրթական ծրագրեր իրականացնող առաջատար բուհերից են:

Ուսումնասիրվել են սպորտի մենեջմենթի և սպորտի մարքեթինգի միասնական և առանձին մագիստրոսական ծրագրեր: Ընտրվել են միջազգային և տարածաշրջանային բարձր վարկանիշ ունեցող բուհերի ծրագրեր: Ծրագրերի ցանկը ներկայացված է աղյուսակ 1-ում:



Ուսումնասիրության արդյունքները դիտարկվել են նաև համաշխարհային և տեղական աշխատաշուկայի զարգացումների և միտումների համատեքստում:

2019 ամերիկյան Forbes ¹ հանդեսը հրապարակել է համաշխարհային աշխատաշուկայի թրենդներն ու ապագայի մասնագիտությունները:

Համաձայն հեղինակավոր հանդեսի կատարած կանխատեսումների՝ մոտակա տասը տարում հսկայական տեմպերով աճելու է digit chain ոլորտի արտադրությունը, ինչի արդյունքում էլ մենեջերների և մարկետոլոգների պահանջարկը ևս ավելանալու է:

Մեծ պահանջարկ են ունենալու լրագրողներն ու բլոգերները, ինչպես նաև SMM մասնագետները, ովքեր սոցիալական էջերում խթանում են կայքեր կամ սոցիալական խմբեր:



¹ <https://www.forbes.ru/professii-budushchego-i-gde-im-uchitsya>

Самые высокооплачиваемые профессии 2019²

В России	В мире
1. Менеджер высшего звена	1. Хирург
2. Работник нефтегазовой отрасли	2. Анестезиолог
3. IT-специалист	3. Управленец высшего звена
4. Бизнес-консультант	4. Пилот
5. Аудитор	5. Стоматолог
6. Программист	6. Аналитик рынка
7. Главный бухгалтер	7. Юрист
8. Стоматолог	8. IT-специалист
9. Логист	9. Менеджер по рекламе
10. Шеф-повар	10. Селекционер и генный инженер

Անդրադառնալով տեղական աշխատաշուկայում այս մասնագիտությունների դիրքին ու կարգավիճակին՝ կարևոր է ընդգծել, որ անցումային տնտեսության պայմաններում մարքեթինգի և կառավարման բարձրորակ իմացությունը կարևոր է տնտեսագիտական ցանկացած մասնագիտության համար: Անհարաժեշտ է իմանալ ինչպես կազմակերպել կառավարման գործընթացը, նրա վրա ազդող բազմաթիվ գործոնները, ինչպես վերլուծել շուկան և բաժանել հատվածների(սեգմենտների), ինչպես գնահատել կարիքները, պահանջմունքները և պահանջարկն ընտրված շուկաներում, ինչպես օգտագործել կոնկրետ ապրանքի սպառողական հատկությունները տվյալ շուկայի սեգմենտի պահանջներին համապատասխան, ինչպես վարել գնային քաղաքականություն՝ սպառողներին գրավելու համար, ինչպես գովազդել և վաճառել ապրանքը, որպեսզի սպառողը տեղեկացված լինի ապրանքի գոյության մասին և ցանկանա գնել այն:

Իրականացված բենչմարքինգը միտված է ուրվագծելու ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող Մարկետինգ և Մենեջմենտ կրթական ծրագրերի բարելավման, ծրագրի շրջանավարտների մրցողունակության բարձրացման հնարավորությունները: Իսկ եթե բուհը հապաղի գործատու կարիքներին արձագանքելու առումով,՝ ռիսկային իրավիճակ կարող է ստեղծվել, քանի որ գործատուն գերապատվություն տալով բիզնես շահին, կթուլացնի

² <https://www.forbes.com/pictures/fjle45fikh/the-10-best-paying-jobs-in-america/#474bf6ab4bcb>

համագործությունը ուսումնական հաստատության հետ, քանի որ դժվարանում է գտնել բարձրորակ և շրջանավարտների:

Կրթական ծրագրերի համեմատական վերլուծություն

Ուսումնասիրվել և համեմատության մեջ են դրվել սպորտի մենեջմենթի և սպորտի մարքեթինգի առանձին և միավորված մագիստրոսական ծրագրեր հայաստանյան և արտասահմանյան տարբեր բուհերից: Ծրագրերի համեմատական վերլուծությունները ներկայացված է չորս աղյուսակներով:

Ուսումնասիրվել է ՀՀ 3 բուհ, որոնք իրականացնում են մենեջմենթի և մարքեթինգի մագիստրոսական **առանձին ծրագրեր**:

Միջազգային բուհերից ընտրվել են սպորտի մենեջմենթի և մարքեթինգի կրթական ծրագրեր առաջարկող ուսումնական հաստատությունները:

Դիտարկվել են նաև միավորված կրթական ծրագրեր իրականացնող բուհերը (Բիրկբեքի համալսարան, Տնտեսագիտական բարձրագույն դպրոց, Սեուլի ազգային համալսարան, Միչիգանի համալսարան), որտեղ իրականացվում են սպորտի մենեջմենթի և սպորտի մարքեթինգի մագիստրոսական միավորված ծրագրեր: (Աղյուսակ 5):

Աղյուսակ 2

«Կառավարում» մագիստրոսի կրթական ծրագրի իրականացումը ՀՀ բուհերում

Բուհը	ՀՖԿՄՊԻ	ԵՊՀ	ՀՊՏՀ	Հայաստանի Ամերիկյան համալսարան
Ծրագր(երի)ի անվանումը	«Մենեջմենտ»	«Միջազգային տնտեսական հարաբերություններ» «Մոդելավորումը ֆինանսատնտեսական համակարգերում» «Տվյալների գիտությունը բիզնեսում» «Ինովացիոն կառավարում» «Պետական կառավարում և տեղական ինքնակառավարում»	«Մարդկային ռեսուրսների կառավարում» «Ձեռնարկատիրական գործունեություն» «Արդյունաբերական բիզնեսի կազմակերպում և կառավարում» «Գործարար վարչարարություն» (կառավարում) «Զբոսաշրջության կառավարում» «Նախագծերի կառավարում» «Հանրային կառավարում» «Առողջապահության կառավարում և վարչարարություն» «Բուժհաստատությունների կառավարում»	Մենեջմենթ
Պատասխանատու ֆակուլտետ	Սպորտային մանկավարժություն և կառավարում	Տնտեսագիտության և կառավարում	Կառավարում	Տնտեսագիտություն և բիզնես
Որակավորումը	Կառավարման մագիստրոս	Տնտեսագիտության մագիստրոս	Տնտեսագիտության մագիստրոս	Կառավարման մագիստրոս
Մասնագիտությունը	Կառավարում	Տնտեսագիտություն Կառավարում	Տնտեսագիտություն	Տնտեսագիտություն
Քաղաքը	Երևան	Երևան	Երևան	Երևան


Հավատարմագրված	-	-	-	
Ուսուցման ձևը Առկա/Full time		+	+	+
Հեռակա /Part time	+	+	+	
Ծրագրի տևողությունը	1 տարի	2 տարի 2,5 տարի	2 տարի 2,5 տարի	1,5 տարի
Կրեդիտները	60	Առկա ` 120 (յուրաքանչյուր կիսամյակ` 30 կրեդիտ) Հեռակա120 (յուրաքանչյուր կիսամյակ` 24 կրեդիտ)	Առկա ` 120	50
Ուսման վարձվճարի չափը	420.000 դրամ	Առկա` 650. 000 դրամ Հեռակա` 520.000 դրամ	Առկա և հեռակա` 700.000 դրամ	1,800,000 դրամ

Ուսումնասիրված արդասահմանյան բուիերի ցանկը

Անվանումը	Երկիրը	Հաստատության տեսակը	Ծրագրի բնույթը	Ծրագրի տևողությունը
Յոհան Կրույֆի ինստիտուտը (Johan Cruyff Institute)	Իսպանիա	Մասնավոր Սպորտի ինստիտուտ	Առանձին	10 ամիս (մենեջ.) 7 ամիս (մարք.)
Տնտեսագիտական բարձրագույն դպրոց (BШЮ)	Ռուսաստան	Պետական հետազոտական համալսարան	Միավորված	2 տարի
Սեուլի ազգային համալսարան (SNU)	Հարավային Կորեա	Պետական մայր բուի	Միավորված	2 տարի
Միչիգանի համալսարան (MU)	ԱՄՆ	Պետական հետազոտական համալսարան	Միավորված	1 տարի
Բիրկբեքի համալսարան (BU)	Մեծ Բրիտանիա	Պետական հետազոտական համալսարան	Միավորված	1 տարի
Սպորտայի գիտությունների և տեխնոլոգիաների միջազգային ակադեմիա (AISTS)	Շվեյցարիա	Հիմնադրամ Սպորտի բուի	Միավորված	15 ամիս
Սպորտի մենեջմենթի հավատարմագրման հանձնաժողով (COSMA)	ԱՄՆ	Միջազգային կառույց	-	-

Գծապատկեր 1

Ընդգրկված Բուիերը/հաստատությունները՝ ըստ աշխարհամասերի



Աղյուսակ 3

Սպորտի մենեջմենթի մագիստրոսական ծրագրերի ընդհանուր բնութագրերի համեմատական վերլուծություն

Բուհը	ՀՖԿՍՊԻ	Յոհան Կրույֆի ինստիտուտը Johan Cruyff Institute
Ծրագրի անվանումը	Սորտի մենեջմենտ	Սորտի մենեջմենտ
Որակավորումը	Մենեջմենտի մագիստրոս	Postgraduate diploma in sport management
Երկիրը	Հայաստան, Երևան	Իսպանիա, Բարսելոնա
Հավատարմագրված	-	+
Ծրագրի տևողությունը	1 տարի	10 ամիս
Կրեդիտները	60	60
Ուսուցման ձևը	Առկա/Full time	Առկա/On campus
Ծրագրի նպատակը	<p>«Մենեջմենտ» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է անհրաժեշտ գիտելիքի հաղորդմամբ պատրաստել սպորտի բնագավառում բարձրակարգ, արհեստավարժ, որակյալ և աշխատաշուկայում մրցունակ կադրեր, ովքեր ունակ կլինեն սպորտային և մարզական կազմակերպություններում, դրանց կառուցվածքային ենթաստորաբաժիններում սպորտային մենեջմենտը գրագետ կազմակերպելու, մարդկային ռեսուրսները ճիշտ կառավարելու համար:</p>	<p>Մագիստրոսական ծրագիրը նպատակաուղղված է ժամանակակից աշխատանքային շուկայում նոր հմտություններով և կարողություններով այնպիսի մասնագետների պատրաստմանը, որոնք կունենան բարձր պահանջարկ նաև այն պարզ պատճառով, որ իրենց մասնագիտական նկարագիրը կներառի ինչպես կառավարչական ժամանակակից հատկանիշներ, այնպես էլ՝ արդյունաբերական ոլորտի առանձնահատկություններին լավատեղյակ տեղեկատվական և մասնագիտական հենք:</p>

Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա.Ընդհանրական կոմպետենցիաներ

Ծրագրի ավարտին շրջանավարտը ունակ կլինի.

1. Հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվություն, վերլուծել այն, համադրել, ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, ինչպես նաև ինքնուրույն ձեռք բերել նոր գիտելիքներ և հմտություններ /այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների օգնությամբ/, դրանք օգտագործել գործնականում:
2. Ընդունել կազմակերպչական-կառավարչական որոշումներ, վերահսկել դրանց իրականացման գործընթացը, գնահատել արդյունքները՝ կիրառելով ժամանակակից շուկայագիտության և սոցիոլոգիայի հետազոտական մեթոդներն ու գործիքակազմերը:
3. Հաղորդակցվել ճիշտ կառուցված գրավոր և բանավոր խոսքով՝ հստակ տերմինաբանությամբ:
4. Կիրառել ձեռքբերված գիտելիքները սպորտային տվյալ կառույցի կառավարումը ճիշտ և մրցողունակ կազմակերպելու համար:
5. Իմանալ մրցակցային շուկայի պահանջները կազմակերպության մենեջմենտը իրականացնելիս:

Բ. Մասնագիտական կոմպետենցիաներ

1. Ղեկավարել կառավարման ողջ գործընթացը, ընդունել հավասարակշռված և փաստարկված որոշումներ:
2. Օգտագործել սոցիոլոգիական հետազոտություն անցկացնելու քանակական և որակական մեթոդները, գլոբալ շուկայական միջավայրում տնտեսագիտական և ռազմավարական վերլուծական մեթոդները գիտական հետազոտությունների և բիզնես գործընթացների կառավարման ժամանակ:
3. Պատրաստել վերլուծական նյութեր բիզնես նախագծերի կառավարման համար և գնահատել դրանց արդյունավետությունը:

Ուսանողը պետք է՝

1. Հասկանա և կիրառի ռազմավարական տեսլականի կարևոր հայեցակետերը սպորտի ինդուստրիայում՝ բիզնեսի կառավարման տեսանկյունից:
2. Ստեղծի շուկայական նոր հնարավորություններ՝ խթանելով ձեռնարկատիրական ոգին նորարարությունների մշակույթը սպորտային կազմակերպություններում:
3. Օգտագործի սպորտի մարքեթինգի ինովացիոն պրակտիկան և իրականացնի բրենդի արդյունավետ ռազմավարություն և հովանավորչության կազմակերպում:
4. Տիրապետի մասնագիտական թիմեր ղեկավարելու և ցանկալի արդյունքի հասնելու մասնագիտական գործիքներին:
5. Մեկնաբանի մարզական կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները և ստեղծի ֆինանսական ռազմավարություններ նոր ապրանքների և բիզնեսի համար:
6. Օպտիմալացնի մարզադաշտի և մարզական միջոցառումների կառավարումը:

4. Վիզուալ և տեղեկատվական գործիքների օգտագործմամբ կազմել և ներկայացնել կատարված աշխատանքների արդյունքներն ամփոփող հաշվետվություններ, պորտֆոլիոներ, աշխատանքի պլանավորման փաստաթղթեր՝ սպորտի կառավարման ոլորտում ժամանակակից պահանջներին համապատասխան՝ ըստ մարզական կազմակերպության առանձնահատկության:
5. Մասնագիտական ոլորտում ձևավորել գործընկերային նոր հարաբերություններ, գտնել այլընտրանքային համագործակցության ձևեր:
6. Աշխատանքային գործընթացում կիրառել վերահսկման գործիքները, հաղորդակցման ձևերը, եղանակները, մեթոդները:
7. Տիրապետել ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիմնադրույթներին կազմակերպության շահերը պաշտպանելու նպատակով

Գ. Նեղ մասնագիտական կոմպետենցիաներ

1. Պլանավորել, կազմակերպել, վերլուծել պետական կառավարման ոլորտը, ընդունել կազմակերպչական, կառավարչական որոշումներ՝ ելնելով համապատասխան կառույցի գործունեության ռազմավարական հայեցակարգից:
2. Ընդհանրացնել և կիրառել սոցիոլոգիական հետազոտության իրականացման և վերլուծության ժամանակակից մեթոդները, գործնականում դրանց ներդրման գործիքակազմերը:
3. Կիրառել գործունեության տարբեր ոլորտներում կառավարման գործընթացի փուլային գործողությունների իրականացման արդի սկզբունքներն ու մեթոդները:
4. Օգտագործելով իր մասնագիտական հմտությունները՝ մշակել,

	<p>վերլուծել ռազմավարական նոր ուղղություններ հասարակական պահանջներին համապատասխան:</p> <p>5. Տիրապետել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի կառավարման գործընթացում գիտական հետազոտություններում կիրառվող նորարարական մեթոդներին, տերմինաբանությանը:</p> <p>6. Գործող շուկայական հարաբերությունների պայմաններում համակցել ոլորտի կառավարման գիտելիքները սպորտային մարքետինգի պահանջներին:</p> <p>7. Օգտագործել անձնակազմի կառավարման ժամանակակից մեթոդաբանությունը կազմակերպության մարդկային ռեսուրսների կառավարման, վերապատրաստման, աշխատանքային գործունեության գնահատման գործընթացում:</p>	
--	--	--

Աղյուսակ 4

Սպորտի մարքեթինգի մագիստրոսական ծրագրերի ընդհանուր բնութագրերի համեմատական վերլուծություն

Բուիը	ՀՖԿՍՊԻ	Յոհան Կրույֆի ինստիտուտը Johan Cruyff Institute
Ծրագրի անվանումը	Մարկետինգ	Սպորտի մարքեթինգ
Որակավորումը	Մարկետինգի մագիստրոս	Postgraduate diploma in sport marketing
Երկիրը	Հայաստան, Երևան	Իսպանիա, Բարսելոնա
Հավատարմագրված	-	+
Ծրագրի տևողությունը	1 տարի	6-7 ամիս
Կրեդիտները	60	30
Ուսուցման ձևը	Առկա/Full time	Առկա/Online
Ծրագրի նպատակը	<p>«Մարկետինգ» մագիստրոսական կրթական ծրագրի նպատակն է անհրաժեշտ գիտելիքի հաղորդմամբ պատրաստել սպորտի բնագավառում բարձրակարգ, արհեստավարժ, որակյալ և աշխատաշուկայում մրցունակ մասնագետներ, ովքեր ունակ կլինեն սպորտային և մարզական կազմակերպություններում, դրանց կառուցվածքային ենթաստորաբաժիններում / ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, Ազգային օլիմպիական կոմիտե, մարզական ֆեդերացիաներ, մարզաառողջարանային կենտրոններ, ֆիթնես ակումբներ և սպորտային ուղղվածության պետական և մասնավոր, առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, միջազգային սպորտային կառույցներ և այլն/ սպորտային մարկետինգը գրագետ կազմակերպելու, համապատասխան կառույցի բիզնես գործունեությունն արդյունավետ և շահութաբեր դարձնելու համար:</p>	<p>Կրթական ծրագրի նպատակն է մագիստրանտներին գիտելիքներ մարքեթինգի գործիքների և սկզբունքների, իրադարձությունների մարքեթինգի և անհատների բրենդավորման գործընթացի կազմակերպման և առաջխաղացման ուղղությունների, հասարակության հետ կապերի և իրացման խթանման գործիքների, ինչպես նաև ուղղակի մարքեթինգի (Direct Marketing) գործիքների, մասնավորապես դրանց ընտրության, կիրառման և արդյունավետության գնահատման մոտեցումների վերաբերյալ</p>

Ծրագրի կրթական
վերջնարդյունքները

Ծրագրի վերջնարդյունքները

Ա. Ընդհանրական կոմպետենցիաներ

Ծրագրի ավարտին մագիստրոսը ունակ կլինի

1. Հավաքագրել տարբեր աղբյուրներից տեղեկատվություն, վերլուծել և ցուցաբերել ստեղծագործական մոտեցում, գտնել օրինաչափությունները, ներկայացնել իր գիտելիքահեն դիրքորոշումը զարգացող շուկայական իրավահարաբերություններում:
2. Տիրապետել հումանիտար և տնտեսագիտական առարկաների հիմնական տեսություններին, փիլիսոփայական հիմնական կատեգորիաներին և ուղղություններին, սպորտային մարկետինգում դրանց տեղայնացման հիմնական հայեցակարգերին: Իրականացնել հետազոտություն, վերլուծություններ և հաշվետու լինել՝ օգտագործելով գիտական հետազոտության մեթոդները:
3. Իր գործունեությունը կառուցել՝ հիմնվելով համամարդկային բարոյական արժեքների վրա և առաջնորդվելով ազնիվ մրցակության կոնցեպտի չափանիշներով:
4. Կառուցել և հաղորդակցվել տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ արտահայտված բանավոր և գրավոր խոսքով:
5. Մշակել մրցակցային մարկետինգային ծրագրեր, գնային քաղաքականություն, ձևավորել հիմնական գործունեության և տարբեր բիզնես նախագծերի զարգացման նոր ռազմավարական ուղենիշեր:
6. Գնահատել և վերլուծել սեփական գործունեության արդյունքները, իրականացնել շուկայի հետազոտություն՝ օգտագործելով տնտեսագիտական և սոցիոլոգիական հետազոտության անցկացման հիմնական մեթոդները:

Բ. Մասնագիտական կոմպետենցիաներ

1. Հստակ տիրապետել շուկայագիտության և սպորտային

Ուսանողը պետք է՝

1. Հասկանա, վերլուծի և ներդնի մարքեթինգային ռազմավարական ծրագրեր, զարգացման ստրատեգիաներ (development strategies), գտնի նոր ապրանքի խորշը տեղական շուկայում: նոր ապրանքի թողարկում և դիրքավորում:
2. Որոշումներ կայացնի ապրանքի գնի, տեղաբաշխման և հաղորդակցության բաղադրիչների հետ կապված:
3. Հասկանա սպորտային շուկայի ուսումնասիրության որակական և քանակական վերլուծության և ախտորոշման գործիքները:
4. Վերլուծի և գնահատի սոցիալական լրատվամիջոցների դերը մարզական կազմակերպություններում:
5. Մեկնաբանի մարզական կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները
6. Օպտիմալացնի մարզադաշտի և մարզական միջոցառումների կառավարումը:

	<p>մարկետինգի բնագավառում կիրառելի տերմինաբանությանը, կազմակերպության մարկետինգային հնարավորությունների վրա ազդող գործոնների սահմանմանը, բերել համապատասխան օրինակներ և փաստարկներ:</p> <p>2. Կիրառել կառավարման և ռազմավարական վերահսկողության, մարկետինգային, մրցակցային, շուկայական աճի և կորպորատիվ ռազմավարությունների ուղենիշերը, ինչպես նաև կազմակերպության մարկետինգային կառավարմանն ուղղված գործունեության ձևերի, եղանակների ու մեթոդական մոտեցումների այն ամբողջությանը, որոնք միտված են մարկետինգային գործունեության բնագավառում մասնագիտական և գիտագործնական խնդիրների լուծմանը:</p> <p>3. Ապահովել մարզական գործընթացում սպորտային կազմակերպության մարկետինգային, մրցակցային, շուկայական հետազոտությունների իրականացման ծրագրի պլանավորումը, մշակումը, վերլուծությունը և հետազոտությունների գործընթացի վերահսկումը:</p> <p>4. Կիրառել տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացող հնարավորությունները, ինչպես նաև օրենսդրական և էթիկական կարգավորումները վերլուծության ծրագրային ապահովման միջոցներ և նախագծեր մշակելիս, ապա՝ ներդնելիս:</p> <p>5. Տիրապետել ֆիզիկական կուլտուրայի և սպորտային մարկետինգի համակարգի առանձնահատկություններին և դրանում ներգրավված պետական մարմինների հետ աշխատելու ձևերին ու գործիքակազմին:</p> <p>6. Կիրառել տվյալների մշակման ու վերլուծման, վիճակագրական և տնտեսագիտական վերլուծության մեթոդները:</p> <p>Գ. Նեղ մասնագիտական կոմպետենցիաներ</p>	
--	--	--

	<ol style="list-style-type: none"> 1. Պլանավորել, կազմակերպել, վերլուծել մարզական կառույցի կառավարման ոլորտը: 2. Իրականացնել ռազմավարական հայեցակարգային դրույթների, ընթացիկ գործողությունների վերահսկում: 3. Տիրապետել ժամանակակից շուկայագիտության հիմնախնդիրների ախտորոշման մեթոդներին, հիմնահարցերի լուծման և վերլուծման մեթոդներին և պրակտիկայում դրանց ներդրման գործիքակազմերին: 4. Տիրապետել գործունեության տարբեր ոլորտներում կառավարման և ղեկավարման գործողությունների իրականացման ժամանակակից սկզբունքներին և մեթոդներին: 5. Առկա շուկայական իրավահարաբերությունների պայմաններում համակցել ոլորտի կառավարման գիտելիքները սպորտային մարկետինգի գործընթացին: 6. Իմանալ և կիրառել սպորտային մարկետինգի գործընթացի ներդրման ճիշտ հաջորդականությունը և սպորտային մարկետինգի արդյունավետ կառավարման կարևորությունը, սպորտային կազմակերպության իրավական փորձաքննությանն առջնվող տեսական և գործնական հմտությունները /պայմանագրերի աուդիտ, աշխատակազմի հետ աշխատանքային պայմանագրերի առկայությունը և դրանց համապատասխանությունը գործող օրենսդրության հետ/, սպորտային մարկետինգի ճիշտ վերահսկողությունը: 7. Ճիշտ կիրառել աշխատակազմի ֆիզիկական և մտավոր աշխատունակության ու ֆիզիկական հնարավորությունների մակարդակը՝ կառավարման գործընթացի հետագա կատարելագործման նպատակով: 	
--	--	--

Ուսումնասիրելով առանձին իրականացվող ծրագրերի ընդհանուր բնութագրերը, ուսումնական պլանները կատարել ենք հետևյալ հետևությունները՝

- ✚ Միջազգային ծրագրերը նպատակ են հետապնդում պատրաստել մասնագետներ խիստ մասնագիտական ոլորտներում գործունեություն ծավալելու, սակայն ՀՖԿՍՊԻ-ի կրթական ծրագրերում աշխատանքային ոլորտները, որպես այդպիսին, տարանջատված չեն:
- ✚ Միջազգային ծրագրերի ուսումնական պլանում ընդգրկված են հատուկ մասնագիտական առարկաներ՝ համապատասխան մասնագիտացման համար: ՀԿՍՊԻ-ի թե «Մարկետինգ» և «Մենեջմենտ» մասնագիտությունների ուսումնական պլաններում առարկայացանկը գրեթե նույնական է:
- ✚ Արտասահմանյան բուհերում սպորտի մենեջմենթի և մարքեթինգի կրթական ծրագրերի իրականացման համար հատկացված է ուսումնառության տարբերակված աշխատաժամալ՝ մենեջմենթի ծրագրի տևողությունը 10 ամիս է, իսկ սպորտի մարքեթինգինը՝ 6-7 ամիս:

Աղյուսակ 5

Սպորտի մենեջմենթի և մարքեթինգի միասնական մագիստրոսի կրթական ծրագրերի ընդհանուր բնութագրերի համեմատական վերլուծություն

Բուհ	Բիրկբեքի համալսարան Birkbeck University	Տնտեսագիտական բարձրագույն դպրոց Высшая Школа Экономики	Սեուլի ազգային համալսարան Seoul National University	Միչիգանի համալսարան Michigan University
Ծրագրի անվանումը	Սորտի մենեջմենթ և մարքեթինգ	Սորտի մենեջմենտ և մարկետինգ	Միջազգային Սպորտի մենեջմենթ	Սպորտի մենեջմենթ
Որակավորումը	Master in sport science	магистра по направлению Менеджмент	Master in global sport management	Master in sport management
Ծրագրի քաղաքը	Լոնդոն	Մոսկվա	Սեուլ	Միչիգան
Հավատարմագրված ծրագիր	+	+	+ (Top 7)	+ (Top 21)
Ծրագրի տևողությունը	1 տարի	2 տարի	2 տարի	1 տարի
Կրեդիտները	60	120	36	30

Ուսուցման ձևը	Առկա/Full time	Առկա/ Очное	Առկա/Full time	Առկա/Full time
Ծրագրի նպատակը	<p>Նպատակն է ձևավորել հմտություններ և համապատասխան փորձագրություն մրցակցելու սպորտային ինդուստրիայում, հարակից բիզնեսներում և կազմակերպություններում՝ տրամադրելով տեսական և գործնական մասնագիտական կրթություն (specialized education) սպորտի մենեջմենթի և մարքեթինգի վերաբերյալ: Զարգացնել սպորտի բիզնեսում կառավարման, ոլորտը կարգավորող հարցերի խորը գիտելիքներն ու ընկալումները: Պատկերացում տալ մարզական կազմակերպությունների մարքեթինգի կարևորության մասին:</p>	<p>Ռուսաստանի սպորտային ինդուստրիայի համար պատրաստել միջազգային մակարդակի մասնագետներ, որոնք ի վիճակի կլինեն գործնականում կիրառել կառավարման առավել արդյունավետ մոտեցումներ, մեթոդներ, տեխնոլոգիաներ և մոդելներ:</p>	<p>Ծրագրի նպատակն է պատրաստել մասնագետներ, ովքեր ցանկանում են դառնալ հաջորդ սերնդի լիդերները սպորտի մենեջմենթի ոլորտում՝ թիրախավորելով թե՛ պետական և թե՛ մասնավոր սպորտային կազմակերպությունները: Ծրագրի առաջին առաքելությունը հաջորդ սերնդի տաղանդները բացահայտելն ու կրթելն է, իսկ երկրորդ առաքելությունն է իրականացնել մասնագիտական հետազոտություններ, որոնք կարող են օգտագործվել սպորտի կառավարման ոլորտի ադիի խնդիրները լուծելու համար:</p>	<p>Ուսանողներին է փոխանցել սպորտային ինդուստրիայի ժամանակակից պատկերացումները՝ ուսանողին հնարավորություն տալով մասնակցելու իրական պայմաններում ստեղծվող նախագծերին, գործընթացներին և պրակտիկային: Ունենալ սպորտային բիզնեսի գործնական գիտելիքներով զինված դասախոսական կազմ:</p>

*Ծրագրերում առկա է կրեդիտներ հաշվարկման փարբեր համակարգեր. Ամերիկյան և Բոլոնյան

Ուսումնական պլանների համեմատական վերլուծություն

1. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի (**ՀՖԿՍՊԻ**) Սպորտի մենեջմենտ մագիստրոսական կրթական ծրագիրը: Ծրագրի տևողությունը 1 տարի է:
2. Национальный исследовательский университет "Высшая школа экономики" (**ВШЮ**), Международный спортивный менеджмент и маркетинг. Համալսարանն ընդգրկված է համաշխարհային համալսարանների TOP-100-ում՝ «Կառավարում» ուղղությամբ: Ունի պետական հավատարմագրում (**ՌԴ**): Ազգային մակարդակի առաջին միացված ծրագիրը՝ միաժամանակյա ուսուցում սպորտի միջազգային կառավարման և շուկայավարման ոլորտում: 2 տարի տևողությամբ մագիստրոսական ծրագիր:
3. Johan Cruyff Institute (**JCU**), Sport management: Համալսարան, որն առաջարկում է առանձին մագիստրոսական ծրագրեր սպորտի մենեջմենթի և մարքեթինգի համար: Ուսումնասիրվել և ներկայացված է սպորտի մենեջմենթի ուսումնական պլանը: Ծրագրի տևողությունը 10 ամիս է:
4. Seoul National University (**SNU**), Sport management: Սեուլի ազգային համալսարան Հարավային Կորեայի խոշորագույն պետական համալսարանը: Համալսարանը զբաղեցնում է 7-րդ հորիզոնականը համաշխարհային համալսարանների TOP-100-ում՝ «Սպորտ» ուղղությամբ: 2 տարի տևողությամբ մագիստրոսական ծրագիր:
5. University of Michigan (**MU**), Sport management: Միչիգանի համալսարան զբաղեցնում է 21-րդ հորիզոնականը համաշխարհային համալսարանների TOP-100-ում: 1 տարի տևողությամբ մագիստրոսական ծրագիր:
6. International Academy of Sport Science and Technology (**AISTS**), Sport management: Սպորտի գիտության և տեխնոլոգիաների միջազգային ակադեմիա, որը հիմնված է օլիմպիական մայրաքաղաք Լոզանում: Եվրոպայի լավագույն սպորտի կառավարման միջազգային ծրագիրն է: Ծրագրի տևողությունը 15 ամիս է:
7. The Commission on Sport Management Accreditation (**COSMA**): Սպորտի կառավարման հավատարմագրման հանձնաժողովը մասնագիտացված հավատարմագրող մարմին է, որի նպատակն է խթանել և ճանաչել գերազանցությունը սպորտի կառավարման կրթության ոլորտում՝ բակալավրիատի, մագիստրոսի և դոկտորական մակարդակներում, իրականացնելով մասնագիտացված ծրագրային հավատարմագրում:

Մասնագիտության կրթական ծրագրերի առարկայացանկերի համեմատական վերլուծություն

Բուհ	ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ					
	Սպորտային կազմակերպություններ Sport Organisation	Ռազմավարական մենեջմենթ Strategic Management	Սպորտի զարգացում Sport Development	Սպորտային միջոցառումների մենեջմենթ Sport Event Management	Սպորտային կառույցների կառավարում Sport Facility Management	Միջազգային հաղորդակցություն համագործակցու. International communication/cooperation
1. ՀՖԿՍՊԻ	<i>Դասընթացի թեմա</i>	-	-	<i>Դասընթացի թեմա</i>	-	-
2. ՅՄԻՕ	-	+	-	+	-	+ *Eng
3. JCU	+	+	<i>մոդուլ</i>	+	+	+
4. SNU	+	+	+	+	+	+
5. MU	+	+	<i>+ ընտրովի</i>	<i>մոդուլ</i>	<i>+ ընտրովի</i>	+
6. AISTS	+	+	-	+	+	+
7. COSMA Որակի կենտրոն	+	+	+	+	+	+
Առաջարկ	+	<i>+ Ընտրովի</i>	+	+	+	+


շարունակություն

Բուհ	ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ					
	Մարքեթինգ Marketing	Մեդիա Media	Իրավական հարցերը սպորտում Legal aspects of Sport	Ֆինանսները սպորտում Sport Finance	Հովանավորչություն Sponsorship	Հետազոտական կարողություններ Research
1. ՀՖԿՍՊԻ	+ ընդհանուր	+ ընդհանուր	Դասընթացի թեմա	+	-	+
2. ՅՍԻՍ	+	-	+	+	-	+
3. յԿՍ	+	+	-	+	+ ընդհանուր	-
4. ՏՍՍ	+	+ ընդհանուր	+	+	+ ընդհանուր	+
5. ՄՍ	+	+	+	+	+	+
6. ԱԻՏՏ	+	+	+	+	+	+
7. ՇՍՄԱ Որակի կենտրոն	+	-	+	+	+	+
Առաջարկ	+	+ ընդհանուր	+ սպորտի թեմաներ	+ թեմաներ Ticketing, IOC	+	+

Ուսումնասիրելով ծրագրերի ընդհանուր բնութագրերը, ինչպես նաև ուսումնական պլանները կատարել ենք հետևյալ հետևությունները՝

- ✚ Ծրագրերի անվանումներում առկա է և՛ «մարքեթինգ» և՛ «մենեջմենթ» բառերը, սակայն որակավորման մեջ նշվում է «մենեջմենթի» մագիստրոս:
- ✚ Ծրագրերը նպատակ են հետապնդում պատրաստել մասնագետներ սպորտի ինդուստրիայի համար՝ ձգտելով սպասարկել երկու ոլորտների աշխատաշուկան:
- ✚ Ընտրված բոլոր ծրագրերում առկա է մագիստրոսական թեզի պատրաստում և պաշտպանություն:
- ✚ Այն ծրագրերը, որտեղ տևողությունը 2 տարի է մեկ ամբողջ կիսամյակ տրամադրվում է մագիստրոսական թեզերի պատրաստմանը:
- ✚ Ծրագրերի տևողությունը 1-2 տարի է, որը պայմանավորված է ուսումնական պլանի խտությամբ և դասավանդվող առարկաների բարդությամբ, սակայն ուսուցանվող առարկաների ընդհանուր քանակը միջինում նույնն է:
- ✚ Միջազգային բուհերում ուսումնական պլանները կառուցված են STEM առարկաների չափորոշիչների շրջանակում՝ ուշադրություն դարձնելով կրթական կիրառական բաղադրիչների հարստացմանը: Ուսումնական պլանի պարտադիր առարկաները խիստ մասնագիտացված են (սպորտի ոլորտում), և ընդգրկում են ընդհանուր կրթաբլոկի մեկ կամ երկու առարկա (ուսանողի ընտրությամբ):
- ✚ Ծրագրերը, որտեղ 2 տարի է, ուսումնական պլանում ընդգրկում են ընդհանուր ճանաչողական առարկաներ «պարտադիր» բաժնում, ինչպիսիք են օրինակ Սպորտի սոցիոլոգիան:

«Մենեջմենտ» և «Մարկետինգ» կրթական ծրագրերի միավորման SWOT վերլուծություն



Ամեն ինչից էլ կարելի է ստանալ սոցիալական բիզնես մոդել, կարևորը մարդիկ հասկանան, դա ինչ է, շատերը այսօր չեն հասկանում ինչ է սոցիալական ձեռնարկատիրությունը, որ այստեղ կարևոր է բիզնես պլանի կազմումը, վաճառքը, ու ամենակարևորը՝ հետադարձ կապը համայնքի հետ, որ համայնքը հասկանա, տեսնի, թե ինչ արժեք է ստեղծվել, ինչ սոցիալական խնդիր է լուծվել: Իհարկե, նաև հատուկ հմտություններ են պետք՝ այստեղ էլ կա սովորական բիզնես կառավարելու համար անհրաժեշտ հմտությունները՝ ֆինանսների կառավարում, թիմի կառավարում, բայց կան նաև հատուկ հմտություններ, օրինակ, թիմի ինքնակառավարման մեխանիզմների ներդրում, մասնակցային կառավարում, համայնքի մոբիլիզացիա, ֆոնդհայթայթում, ինքնաներկայացում, սոցիալական բաղադրիչի ներկայացում, ճիշտ փայտեթավորում:

Մեջբերում, սոցիալական ձեռներեցության գծով փորձագետի հետ հարցազրույցից

Հետևություն՝

Կրթական ծրագրերի միավորման և չմիավորման պարագայում առաջնահերթ է մնում աշխատաշուկայում սեփական խորշը գտնելու խնդրի կարգավորումը, ինչը հնարավորություն կտա շրջանավարտին աշխատաշուկայում զբաղեցնել ինդուստրիաների կառավարման, մարքեթինգային գործունեություն և մարքեթինգային հաղորդակցություններ իրականացնող առաջատար ընկերությունների այնպիսի հաստիքներ, որոնք պահանջում են առավել խորը մակարդակի մարքեթինգային, տնտեսագիտական, կառավարման և բիզնեսի գործունեության ակադեմիական և փափուկ հմտություններ (soft skills): Կառավարչական և անձնակազմի վարվելակերպի հմտությունների հետազոտությունների արդյունքները վկայում են, որ այս ոլորտներում ամենապահանջված փափուկ հմտություններն են՝ կրեատիվություն, համոզիչ լինելու ունակություն, համագործակցելու ունակություն, հարմարվողականություն, ժամանակը կառավարելու ունակություն: Այս համատեքստում կարևորվում է կրթական ծրագրի բարելավումը դիտարկել ոչ միայն ակադեմիական իրողությունների դիտանկյունից, այլ նաև հաշվի առնել աշխատաշուկայում ոչ ֆորմալ ուղիներով ձեռք բերված տվյալներն ու արձանագրված միտումները:

Օգտագործված աղբյուրներ

1. <https://www.cosmaweb.org/about-cosma.html>
2. <https://en.snu.ac.kr/>
3. <https://www.hse.ru/ma/insport/>
4. http://www.bbk.ac.uk/study/2020/postgraduate/programmes/TMSSMMRK_C
5. <https://cbe.aua.am/msm/>
6. <https://asue.am/am/faculty/marqet>
7. <https://www.forbes.com/pictures/fjle45fikh/the-10-best-paying-jobs-in-america/#474bf6ab4bcb>
8. <https://www.forbes.ru/professii-budushchego-i-gde-im-uchitsya>

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Birkbeck University



SPORT MANAGEMENT AND MARKETING (MSC)



Year of entry 2020

Start date October 2020

Location Central London

Status Fully Approved

APPLY NOW: PART-TIME 
([HTTP://WWW.BBK.AC.UK/CGI-
BIN/INT_REDIRECT.CGI?
PAGE=IPP.TMSSMMRK_C.1020](http://www.bbk.ac.uk/cgi-bin/int_redirect.cgi?PAGE=IPP.TMSSMMRK_C.1020))

APPLY NOW: FULL-TIME
([HTTP://WWW.BBK.AC.UK/CGI-
BIN/INT_REDIRECT.CGI?
PAGE=IPP.TMSSMMRK_C.1120](http://www.bbk.ac.uk/cgi-bin/int_redirect.cgi?PAGE=IPP.TMSSMMRK_C.1120))

Duration

One year full-time or two years part-time

Attendance

Two to three evenings a week full-time or one to two evenings a week part-time, October to July

Our MSc Sport Management and Marketing is designed to give you the skills and expertise you need to compete in the sport industry and related businesses and organisations, by providing specialist teaching about the principles and practice of sport management and marketing.

It will help you to develop a deeper understanding of management, governance and regulatory issues within the business of sport. It also provides an understanding of the relevance of marketing for sports organisations.

Teaching is informed by the activities of the academic staff in the Birkbeck Sport Business Centre (<http://www.sportbusinesscentre.com/>), Birkbeck's designated research centre for the study of sport business.

HIGHLIGHTS

